# Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե ՀԿ
# 2024 թ.ֆինանսական գործունեության
# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում՝ 2024թ. հունվարի 1-ից մինչև 2024թ. դեկտեմբերի 31-ը, ստացված միջոցների ընդհանուր գումարը կազմել է **67,477,455** դրամ: Հաշվի առնելով 2024թ. հունվարի 1-ի դրությամբ **6,356,382** դրամ մնացորդը և **167,454** դրամ արտարժույթի փոխանակման կուրսային դրական տարբերությունը, ընդհանուր գումարը կազմել է **74,001,291** դրամ:

ԽԱՊԿ-ը 2024թ. ընթացքում ստացել է դրամաշնորհներ՝ Հանուն ժողովրդավարության ազգային հիմնադրամից (NED, ԱՄՆ) – 45,430,095 դրամ, Կանադայի դեսպանատնից – 654,532 դրամ, Ինտերնյուս Նետվորկից - 21,356,376 դրամ: Նաև ստացվել է ժամանակավոր փոխառություն ԽԱՊԿ-ի նախագահից – 36,452 դրամ՝ կանոնադրական և ծրագրային ծախսերի համար:

Հաշվետու ժամանակաշրջանում ծախսվել է **57,486,496** դրամ, որից.

1. «Լրատվամիջոցների բարեփոխումների ջատագովություն Հայաստանում», ծրագրի դոնոր՝ NED, ԱՄՆ – 32,051,493 դրամ:
2. «Լրատվամիջոցների հրապարակումներում վիրավորանքի և զրպարտության հետ կապված գործերի քննարկման դատական պրակտիկայի բարելավում, ներառյալ մոնիտորինգը և դրա արդյունքները հանրությանը ներկայացնելը», ծրագրի դոնոր՝ Կանադայի դեսպանատուն – 3,594,000 դրամ:
3. «Խոսքի ազատության զարգացումը երկրում, լրագրողների և լրատվամիջոցների իրավունքների պաշտպանությունը», ծրագրի դոնոր՝ Ինտերնյուս Նետվորկ – 21,820,924 դրամ:
4. Կազմակերպության կանոնադրական ծախսեր – 20,079 դրամ:

Դրամաշնորհ տրամադրած կազմակերպությունների հետ համագործակցության պայմաններին համապատասխան՝ նրանց ժամանակին ներկայացվել է ծրագրերի և ծախսվող գումարների ամբողջ հաշվետվությունը: Բոլոր եկամուտները և ծախսերը հիմնավորված են փաստաթղթերով, որոնք պահվում են ԽԱՊԿ-ի հաշվապահությունում:

2025թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդը կազմել է **16,514,795** դրամ:

Նախագահ՝ Ա.Մելիքյան

Հաշվապահ՝ Ա.Պողոսյան

Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ՝ Ա.Պապյան